

ժամ կաշէի արեւմտեան հարաւ, սորա վերան մեծ ձորի մէջ երեք զիւղեր կան, մեծ մեծ քարայրներ, քէսուկայ ջուրն մօտէն (հիւսիսային կողմէն) կանցնի, 1 ¹/₂ ժամ արեւելեան հիւսիս կը հոսի, Զալապաշիէ ի կալէ մէկ ժամ հեռի, աստի ևս ¹/₂ ժամու չափ արեւելեան հարաւ կը հոսի, Նատրշեխու մօտէն (յարեւելից) կանցնի, կը դառնայ արեւմտեան հարաւ ¹/₂ ժամ:

ԽԱՆՃԵԱՆ.—15 տուն ք. 2 ժամ արեւմտեան հիւսիս Մուշեանայ, Մանազկերտի սահմանի վերայ, քէսուկայ ջրի հարաւն, 6 ժամ քէսուկայ ջրի յՆփրատ խառնուրդէն արեւմտեան հիւսիս:

Գիւղիս գիւղքը բարձր է, ունի ընդարձակ արօտավայրեր:

Անդաբու մէջ կղզիացած մի վայր է գիւղս, քրդեր երբ մի հայ աղջիկ փախցնեն, քանի տարի այստեղ կը պահեն, մինչև ընտելացնեն, զաւակներ ունենայ, ապա կը տանեն իրենց գիւղերը ¹:

Քանի քանի հարսներ և աղջիկներ գիտեմ որ ոմանք կամաւ և շատերն ակամայ բռնի բերուած են այս գիւղը, երկար տարիներ աչքերնին յառած են ի ձանապարհ, կսպսսեն մի հայ փրկարար ձեռքի, որ ազատին, քանի քանի հառաչանքներով Անդաբու սա-

1. Գիւղիս շրջականեր գտնուած գիւղօրայք ծանապարհից դուրս լինելով հայու ոտք չտանէր այժմ, ուր տարուած են Դոնուէն, Պուլամնի-նեբէն Մանազկերտէն, Բզնունեայ գաւառէն, Բագրեւանդէ եւ Բասեանէն ընդ տարրուած աղջիկներ եւ հարսներ որոցք մին եւս Մանազկերտէ լինելով քանի քանի անգամ փախուստներ տուած, Հայոց յանձնուած, ապա ընդ տարրուած է եւ ապա մի նորածին աղջիկը գրկելով լեռնէ տեղ խոյս տուած ապաւինած է ոռաստոսն. եւ միթէ Մուսայ Բէյի փախցնել տուած նարկիզէ աւելի բռնաքարութեանց զո՞ գացած չէ այս հարսն, որոյ անցքը լրելեան անցած է: